# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/3 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի 5-րդ դարի Ծիրանավոր և ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի Թարգմանչաց եկեղեցիներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.04.2023թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողովի կազմը՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հրանտ Հովսեփյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Լուսինե Իգիթյան /գնահատող/ |
| | Սուրեն Շաքարյան /գնահատող/ |
| | Արմինե Ստեփանյան /բացող/ |
| | Վերգինե Սահակյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Արսեն Սողոմոնյան |
| Բացակայում է՝ | Լուսինե Իգիթյանը |

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «Հարսնաձոր» ՍՊԸ | harsnadzor@yandex.ru |
| 2 | «ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ | lev.ghukasyan@gmail.com |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Հ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Հարսնաձոր» ՍՊԸ | | «ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | | | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 299747802 | 249395850 | 299275020 | - | - |
| 2 | 119196066 | - | - | 143908750 | 143908750* |

* Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

**5. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**5.1 «Հարսնաձոր» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում.

5.1.1 Բացակայում է հայտի ապահովումը, ինչը շտկման ենթակա չէ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

5.1.2 Հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Ծավալաթերթ-նախահաշվում առանձին հաշվարկված և լրացված չեն «2023 թվականին նախատեսված» և «Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում հետագա տարիներին նախատեսված» աշխատանքների մասով «Չնախատեսված ծախսեր 6%» տողի «Ընդամենը» սյունակի գումարները, որի արդյունքում վերոգրյալ աշխատանքների մասով հաշվարկված ԱԱՀ արժեքների գումարը չի համապատասխանում աշխատանքների «Ընդհանուրը» տողի գումարի համար հաշվարկված ԱԱՀ արժեքին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

**5.2 «ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված հայտում.

5.2.1 Առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

5.2.2 Հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ բացակայում է մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

**6. Տվյալներ ընտրված, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և սույն արձանագրության 5.1.1 կետը՝ մերժել **«Հարսնաձոր» ՍՊԸ-ի** հայտը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետը՝ մերժել **«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ի** հայտը ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով՝ գնային առաջարկը գնման գինը գերազանցելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

**7. Գնահատման արդյունքների մասին.**

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, հայտերից ոչ մեկը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

7.2 Հրապարակել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Հովսեփյան /նախագահ/

---------- Սուրեն Շաքարյան

---------- Արմինե Ստեփանյան

---------- Վերգինե Սահակյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/